# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

№ 41
29.03.2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան.

Կից Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի ղեկավարի թիվ 04 որոշումը ։
Առդիր՝ 1 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ՔԱԼԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N 04
21.03.2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 06-044-0016-0017 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ« ԽԱՉԱՏՈՒՐ ՀՈՎԻԿԻ ԲԱԼԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉև 15»05»2001 Թ. ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խաչատուր Հովիկի Բալայանի դիմումը , համայնքապետարանի կողմից տրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 01.04.1991 թ. թիվ 3 որոշումից քաղվածքը , ««Արտյոմ Սաքանյան »» ԱՁ –ի կողմից տրված հողամասի տեղագրական հատակագիծը , ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով , 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով , ««Տեղական ինքնակառավարման մասին »» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով , ՀՀ 510 –Ն օրենքով , ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005 թ. թիվ 2387 որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ

1.Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 06-044-0016-0017 ծածկագրի տակ գտնվող 1907.2 քմ հողամասի հողահատկացման փաստաթղթերի հիմքերը.

ա/ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 06-044-0016-0017 ծածկագրի տակ գտնվող հողամասի մակերեսները՝ 1907.2 քմ .

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի :

2. Սույն որոշման 1-ին կետում նշված 1907.2 քմ մակերեսով հողամասը , որը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում , անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Խաչատուր Հովիկի Բալայանին :

3. Հողամասում առկա է Խաչատուր Հովիկի Բալայանի կողմից 2011թ. ինքնակամ կառուցված 112.0 քմ արտաքին մակերեսով անասնագոմ :

4. Հաստատել 06-044-0016-0017 ծածկագրի տակ գտնվող բնակելի կառուցապատման հողամասի փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Լոռի Բերդ համայնք , Անդրանիկի փողոց թիվ 32 :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ԲԱԼԱՅԱՆ